



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ
ՀԻՄՆԱԳՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՒՄՏԵԱՆ ԹԵՄԻ
WESTERN PRELACY
OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA
H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE
Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745
E-mail: Prelacy@aol.com Website: www.westernprelacy.org



ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ ՊԻՏԻ ՀԱՆԴԻՍԱՊԵՏԵ
Ս. ԽԱԶ ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ

Կիրակի, 3 Օգոստոսին, Մոնթեպելլոյի Ս. Խաչ Մայր Տաճարին մէջ Ս. Պատարագին պիտի հանդիսապետէ եւ իր պատգամը պիտի փոխանցէ Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան:

Ս. Պատարագի ընթացքին, գնահատելով եկեղեցւոյ հոգեւոր հովիւներէն՝ Արժ. Տ. Աշոտ Քհնյ. Գամպուրեանի ծառայութիւնը, Առաջնորդ Սրբազան Հայրը քահանայական լանջախաչ կրելու իրաւունք պիտի շնորհէ անոր:

Կը հրաւիրենք մեր հաւատացեալ ժողովուրդը ներկայ գտնուելու Ս. Պատարագին, լսելու Առաջնորդ Սրբազանին պատգամը եւ հաղորդուելու օրուան խորհուրդով:

PRELATE TO PRESIDE OVER DIVINE LITURGY AT
HOLY CROSS CATHEDRAL IN MONTEBELLO

On Sunday, August 3rd, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, will preside over Divine Liturgy and deliver the sermon at Holy Cross Cathedral in Montebello.

During Divine Liturgy, the Prelate will bestow Rev. Fr. Ashod Kambourian with the honor of bearing a pectoral cross for his service.

ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉԸ
ՀԱՅԿԱԿԱՆ ՈՍԿՐԱԾՈՒԾԻ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԶԵՌՆԱՐԿԻՆ

Կիրակի, 3 Օգոստոսի երեկոյեան, Կլենտել Յիլթըն պանդոկի մէջ, տեղի պիտի ունենայ Հայկական Ոսկրածուծի Հիմնադրամի տարեկան ձեռնարկը: Յանուն Առաջնորդ Սրբազան Հայր Արժ. Տ. Ռազմիկ Քհնյ. Խաչատուրեան ներկայ պիտի ըլլայ ձեռնարկին եւ պիտի փոխանցէ Առաջնորդ Սրբազանին օրհնութեան խօսքը:

PRELATE REPRESENTED AT ABMDR ANNUAL BANQUET

The Armenian Bone Marrow Donor Registry's "Match for Life 2008" banquet will take place on the evening of Sunday, August 3rd, at the Glendale Hilton.

Rev. Fr. Razmig Khatchadourian will attend and convey the Prelate's blessings.

ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱԶԱՆԸ ԿԸ ՄԱՍՆԱԿՑԻ ՄԻԱՑԵԱԼ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՎԵՐՉՈՒԹԵԱՆ ԺՈՂՈՎԻՆ

Շաբաթ, 2 Օգոստոսի առաւօտուն, Առաջնորդ Սրբազան Հայրը պիտի մասնակցի Միացեալ Հայկական Հիմնադրամի հերթական ժողովին, որ տեղի պիտի ունենայ Հիմնադրանի գրասենեակին մէջ, Կլենտէյլ:

Ժողովին պիտի քննարկուին Հիմնադրամի վերջին շրջանի աշխատանքներն ու անմիջական ծրագիրները:

PRELATE TO PARTICIPATE IN UAF BOARD MEETING

On the morning of Saturday, August 2nd, the Prelate will participate in the United Armenian Fund board meeting, which will be held at the UAF office in Glendale.

During the meeting, the most recent endeavors of the UAF will be assessed and future activities will be discussed and drafted.

ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱԶԱՆԸ ԸՆԴՈՒՆԵՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄՕՏ ՄԱԿԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ ԶՈՆՍՈՒԵԼՕ ՎԻՏԱԼԸ

Հայաստանի մօտ ՄԱԿի ներկայացուցիչ եւ միջազգային կազմակերպութեան աշխատանքները համակարգող գլխաւոր պատասխանատու Տիկին Զոնսուելօ Վիտալ Չորեքշաբթի, 30 Յուլիսի առաւօտուն այցելութիւն մը տուաւ Ազգային Առաջնորդարան եւ դիմաւորուեցաւ Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեանի կողմէ: Դեսպան Վիտալի կ'ընկերանային Հայաստանի նախկին գլխաւոր հիւպատոս Տիար Արմէն Բայբուրթեան, որ ներկայիս ՄԱԿի մէջ կը վարէ Հայաստանի հարցերու երեց խորհրդականի պաշտօնը, Հայաստանի մասին ծրագիրներու բաժանմունքի վարիչ Տիկին Նարինէ Սահակեան: Հանդիպումին ներկայ եղաւ Ազգ. Առաջնորդարանի Զրիստոնեական Դաստիարակութեան բաժանմունքի վարիչներէն Հոգ. Տ. Պարթեւ Վրդ. Կիւլիմեան:

ՄԱԿի ներկայացուցիչը՝ Տիկին Վիտալ շնորհակալութիւն յայտնեց ընդունելութեան համար, ապա, ընդհանուր գիծերու մէջ խօսեցաւ այն ծրագիրներուն մասին, զորս ՄԱԿը կը պատրաստէ Հայաստանի տնտեսական, կրթա-մշակութային, կենսոլորտի, առողջապահական եւ այլ մարզերու աշխուժացման համար: Ան յայտնեց, որ Հայաստանի մէջ ՄԱԿի աշխատանքները սկսած են 1993ին, եւ նշեց, որ ինք այցելութիւններ կու տայ հայկական սփիւռքի տարբեր օճախները, եղած է նաեւ Լիբանան ու այցելած՝ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսարանը, նկատի ունենալով, որ արտերկրի հայութիւնը սերտ կապեր ունի Հայաստանի հետ եւ ունի կարողականութիւններ՝ որոնք կրնան ի սպաս դրուիլ Մայր Հայրենիքին: ՄԱԿի այս բաժանմունքը կապեր կը հաստատէ նաեւ այլ ժողովուրդներու սփիւռքներուն հետ, օգտուելու համար անոնց փորձառութենէն:



Առաջնորդ Սրբազանը բարձր գնահատեց ՄԱԿի պաշտօնատարներուն այս աշխատանքները եւ հաստատեց, որ Արեւմտեան մեր շրջանի հայութիւնը միշտ ալ պատրաստակամ եղած է գործակցելու Հայաստանի բարգաւաճման ծառայող ծրագիրներու իրականացման համար:

Տիար Ա. Պայպուրթեան, իր կարգին, գոհունակութիւն արտայայտեց Ազգային Առաջնորդարանի նոր շէնքին իրականացման համար, մաղթելով որ Առաջնորդարանի աշխատանքի դաշտերը նոր տարածում գտնեն ու ծառայական կեանքը արձանագրէ նոր նուաճումներ:

Հրաժեշտի պահուն, տեղի ունեցաւ յուշանուէրներու փոխանակում: Հիւր ներկայացուցիչները նաեւ ծանօթացան Ազգ. Առաջնորդարանի շէնքի տարբեր բաժանմունքներուն ու Ս. Տրդատ եւ Ս. Աշխէն մատրան:

PRELATE WELCOMES UNITED NATIONS RESIDENT COORDINATOR CONSUELO VIDAL TO THE PRELACY

On the morning of Wednesday, July 30th, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, welcomed to the Prelacy United Nations Resident Coordinator and UN Development Programme (UNDP) Resident Representative Mrs. Consuelo Vidal. Mrs. Vidal was accompanied by former Consul General of Armenia in Los Angeles Mr. Armen Bayburtian, who is currently a senior advisor on Armenian issues in the United Nations, and UNDP director Mrs. Narine Sahakyan. Prelacy Christian Education Department Co-Director Very Rev. Fr. Barthev Gulumian was also in attendance.

Mrs. Vidal reported to the Prelate on the UN development programs in Armenia aimed at improving finance, education, environment, health, and

various other sectors. She also reported that the United Nations began operating in Armenia in 1993 and that she herself has visited many communities in the Diaspora, including Lebanon and specifically the Catholicosate of Cilicia, given that Armenians living in these communities have close ties to the homeland and have the means to offers assistance to Armenia. She noted that the specific department of the United Nations of which she is a part of visits with non-Armenian Diaspora communities as well to learn of their experiences.



The Prelate highly commended the efforts of the guests and reaffirmed that our community is always ready to contribute to the progress of Armenia.

Mr. Bayburtian congratulated the Prelate on the achievements of the Prelacy such as the successful realization of the headquarters, and conveyed his well wishes for

success in future endeavors.

The meeting concluded with an exchange of mementos, following which the guests were given a tour of the headquarters to become familiarized with the various departments.

ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐՔԱՉԱՆԸ ԸՆԴՈՒՆԵՑ ԼԻՔԱՆԱՆԻ ԳԼԽԱՒՈՐ ՀԻՒՊԱՏՈՍԻ ՏԵՂԱԿԱԼ ՀՈՒՍԱՍ ՏԻԱՊԸ

Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Ս. Մուշեղ Արք. Մարտիրոսեան Հորեքչաբթի, 30 Յուլիսի յետմիջօրէին Ազգ. Առաջնորդարանին մէջ ընդունեց Լոս Անճելըսի մօտ Լիբանանի գլխաւոր հիւպատոսի տեղակալ Տիար Հուսամ Տիապը, որ վերջերս նշանակուած է այս պաշտօնին:



Հանդիպումին ներկայ եղան Հոգ. Տ. Պարթեւ Վրդ. Կիւլիմեան եւ Ազգ. Վարչութեան անդամներ Տեարք Կարօ Էշկիեան եւ Խաչիկ Երեցեան:

Նկատի ունենալով, որ յարգելի հիւրը առաջին անգամ ըլլալով էր որ կ'այցելէր Ազգ. Առաջնորդարան, Առաջնորդ Սրբազանը ընդհանուր տեղեկութիւններ տուաւ աշխատանքի մարզերուն մասին,

ընդգծելով, որ Ազգ. Առաջնորդարանին ու Լիբանանի հիւպատոսարանին

միջեւ կան տասնամեակներու վրայ տարածուող բարեկամական սերտ կապեր, մանաւանդ, որ Լիբանանը կը նկատուի սփիւռքի հայութեան մէկ գլխաւոր օճախը եւ Ցեղասպանութենէն ետք հիւրընկալած Է Մեծի Տանն Կիլիկիոյ Ս. Աթոռը՝ Անթիլիասի մէջ:

Լիբանանցի դիւանագետը գոհունակութիւն արտայայտեց հիւրընկալումին համար: Ան դրուատիքով արտայայտուեցաւ ընդհանրապէս հայութեան ու մասնաւորաբար Լիբանանի հայ համայնքին մասին, նշելով, որ անիկա կարելոր ներդրում ունեցած է Լիբանանի տնտեսական, մշակութային ու քաղաքական կեանքերուն մէջ, շահելով հաւատարիմ քաղաքացիի կոչում: Ան յոյս յայտնեց, որ հիւպատոսարանին ու Ազգ. Առաջնորդարանին միջեւ գործակցութիւնը շարունակուի եւ նոր հանգրուաններ սուաճէ:

Հրաժեշտ առնելէ առաջ, հիւր դիւանագետը վստահութիւն յայտնեց, որ հիւպատոսարանին ու Ազգ. Առաջնորդարանին միջեւ կապերը պիտի մնան սերտ ու յաճախակի:

PRELATE WELCOMES NEW ACTING CONSUL GENERAL OF LEBANON THE HONORABLE HOUSSAM DIAB

On the afternoon of Wednesday, July 30th, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, welcomed to the Prelacy the new Acting Consul General of Lebanon the Honorable Houssam Diab. Participating in the meeting were Very Rev. Fr. Barthev Gulumian and Executive Council members Mr. Garo Eshgian and Mr. Khatchig Yeretizian.

Given that it was the Acting Consul's first visit to the Prelacy, the Prelate familiarized him with the endeavors and mission of the Prelacy. He emphasized the decades-long friendship between the Prelacy and the Lebanese Consulate, highlighting the fact that Lebanon has one of the largest Armenian communities in the Diaspora and that the Catholicosate of Cilicia was welcomed in Lebanon in the aftermath of the Genocide.

The Acting Consul spoke highly of the Armenian people as a whole and specifically of the community in Lebanon who have contributed positively to the economy, culture, and society in general, and asserted that the collaboration between the Consulate General and the Prelacy will continue for years to come.

ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱԶԱՆԸ ԸՆԴՈՒՆԵՑ Հ.Մ.Ը.Մ.Ի ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ՆԵՐԿԱՅԱՅՈՒՑԻՉՆԵՐԸ

Հ.Մ.Ը.Մ.Ի Արեւմտեան Միացեալ Նահանգներու Շրջանային Վարչութիւնը ներկայացնող պատուիրակութիւն մը, գլխաւորութեամբ վարչութեան ատենապետ Տիար Սթիւ Արթինեանի, Երեքշաբթի, 29 Յուլիսի երեկոյեան այցելութիւն մը տուաւ Ազգային Առաջնորդարան եւ ընդունուեցաւ թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք.

Մարտիրոսեանի կողմէ: Հանդիպումին ներկայ եղան Կոստական ժողովի ատենապետ Գերպ. Տ. Միւռն Տ. Վրդ. Ազնիկեան, Ազգ. Վարչութեան փոխ ատենապետ Տիար Կարօ Աւագեան եւ անդամ Տիար Ներսէս Մելքոնեան:

Հ.Մ.Ը.Մ.ի ներկայացուցիչները եկած էին Առաջնորդ Սրբազանը



շնորհաւորելու չորրորդ շրջանի մը համար Առաջնորդ իր վերընտրութեան առիթով: Անոնք մաղթեցին, որ ան իր ծառայական առաքելութիւնը շարունակէ դէպի սոր իրագործումներ: Առաջնորդ Սրբազանը շնորհակալութիւն յայտնեց բարեմաղթութեանց համար:

Հանդիպումը առիթ եղաւ խորհրդակցելու Հ.Մ.Ը.Մ.ի

սերնդակերտ աշխատանքին ու, այս ծիրին մէջ, Ազգ. Առաջնորդարանին հետ գործակցութեան դաշտերուն շուրջ: Առաջնորդ Սրբազանը գնահատանքով արտայայտուեցաւ Հ.Մ.Ը.Մ.ի յայտնի ու անանուն այն գինուորագրեալներուն մասին, որոնք այս տարի եւս յաջողութեամբ պսակեցին Նաւասարդեան խաղերը, արձանագրելով սոր նուաճում մը: Խորհրդակցութիւնը ընդգրկեց նաեւ Հ.Մ.Ը.Մ.ի սոր բանակավայրին կապուած ծրագիրներ, նկատի ունենալով, որ բանակավայրը կոչուած է դառնալու երիտասարդութեան ու Հ.Մ.Ը.Մ.ի մեծ ընտանիքի գործունէութեան մէկ իւրայատուկ օճախը:

PRELATE WELCOMES A DELEGATION FROM HOMENETMEN REGIONAL EXECUTIVE

On the evening of Tuesday, July 29th, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, welcomed to the Prelacy Regional Executive members of Homenetmen Western Region. The delegation was headed by Chairman Mr. Steve Artinian. Religious Council Chair Very Rev. Fr. Muron Aznikian and Executive Council Vice-Chair Mr. Garo Avakian and member Mr. Nerses Melkonian also participated in the meeting.

At the start of the meeting, the members of the delegation congratulated the Prelate on his re-election, for which the Prelate expressed thanks and appreciation. The Prelate and guests went on to discuss the endeavors of Homenetmen, such as the new campsite which is anticipated to become an important center for the youth and the larger Homenetmen family, and those that involve collaboration with the Prelacy. The Prelate commended all the members of Homenetmen for their dedication to the community and congratulated them on what was yet another successful Navasartian games.

**Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՄԷՋ, Ս. ՊԱՏԱՐԱԳԻ ԸՆԹԱՅՔԻՆ,
ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐՔԱՉԱՆԸ ՊԱՏԳԱՄ ՄԸ ՓՈԽԱՆՑԵՑ
ԼԻՉՊՈՆԻ ՆԱՅԱՏԱԿՆԵՐՈՒՆ ՅԻՇԱՏԱԿԻՆ**

Կիրակի, 27 Յուլիսին, Կլենտէյլի Ս. Աստուածածին եկեղեցւոյ Ս. Պատարագին հանդիսապետեց եւ իր պատգամը փոխանցեց Առաջնորդ Սրբազանը:

Նկատի ունենալով, որ նոյն օրը նաեւ կը զուգարդիպէր Լիզպոնի հինգ ազատամարտիկներու յիշատակի 25-ամեակին, Առաջնորդ Սրբազան Յօր տնօրինումով, Թեմիս բոլոր եկեղեցիներուն մէջ Ս. Պատարագի աւարտին, յատուկ հոգեհանգստեան արարողութիւն կատարուեցաւ:

Ս. Պատարագի աւարտին, հոգեհանգստեան արարողութենէն ետք, յետմիջօրէին, Կլենտէյլի Ս. Աստուածածին եկեղեցւոյ «Արմենակ Տէր Պետրոսեան» սրահին մէջ տեղի ունեցաւ Համաժողովրդային Ոգեկոչում-Հաւաք, նուիրուած Լիզպոնի Հերոսական սիրանքի 25-ամեակին:

Առաջնորդ Սրբազան Հայրը ներկայ եղաւ ձեռնարկին:

Ներկայ էին եկեղեցւոյ հոգեւոր հովիւները, Ազգ. Կեդրոնական Վարչութեան անդամ՝ տիար Խաժակ Տիգիճեան, Ազգ. Վարչութեան ներկայացուցիչ՝ տիար Կարօ Էշկիեան, Հ.Յ.Դ. Բ.ի ներկայացուցիչ Դոկտ. Վիգէն Յովսէփեան, Հ.Յ.Դ. Կ.Կ.ի ներկայացուցիչ տիար Աւետիք Իգմիրլեան եւ անդամներ, եկեղեցւոյ երեսփոխաններ, հոգաբարձութեան անդամներ, միութեանց ու կազմակերպութեանց ներկայացուցիչներ եւ հոծ բազմութիւն:

Օրուան խօսքը փոխանցեց տիար Յովան Թաշճեան:

Իրագործուեցաւ գեղարուեստական պատշաճ յայտագիր:

Առաջնորդ Սրբազան Յօր խօսքով եւ օրհնութեան աղօթքով ոգեկոչման հաւաքը հասաւ իր աւարտին:

**PRELATE PRESIDES OVER DIVINE LITURGY AND LISBON 5
REQUIEM SERVICE AT ST. MARY'S CHURCH IN GLENDALE**

On Sunday, July 27th, the Prelate presided over Divine Liturgy, delivered the sermon, and presided over requiem service for the memory of the Lisbon 5 at St. Mary's Church in Glendale.

In the afternoon, the Prelate participated in a community gathering and commemoration of the Lisbon 5 at "Armenag Der Bedrossian" Hall. Among the guests in attendance were the parish pastors, Central Executive Council member Mr. Khajag Dikijiam, Executive Council member Mr. Garo Eshgian, ARF Bureau member Dr. Viken Hovsepian, ARF Central Committee representative Mr. Avedik Izmirlian and members, delegates, Board of Trustees, and representatives from sister organizations.

The commemoration was comprised of a speech by keynote speaker Mr. Hovan Tashjian as well as an artistic program, and came to a close with the Prelate's message and benediction.